ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱԶԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/1117/02/24 ք. Երևան
23 Փետրվարի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Թումասյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ծանոթանալով ըստ հայցի «Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ Վիճակագրական կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով 28.12.2023թ.-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, ՀՀ վիճակագրական կոմիտեի թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումին և կից փաստաթղթերին

ՊԱՐԶԵՑ

«Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանը 13.02.2024 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի

առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ Վիճակագրական կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով 28.12.2023թ.-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:
Դատարանի 19.02.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը կից փաստաթղթերով վերադարձվել է:
Հայցադիմումը 21.02.2024 թվականին կրկին ներկայացվել է Դատարան, իսկ դատավոր Ա.Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 22.02.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝
«1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:
Տվյալ դեպքում հայցվորը ներկայացված հայցապահանջով վիճարկում է պատվիրատու պատասխանողի գործողությունները՝ ուղղված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելուն, ուստիև հայցը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:
Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահին բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործի քննությունը դատական նիստում անցկացնելու անհրաժեշտությունը, հետևաբար, գործի քննությունը կիրականացվի գրավոր ընթացակարգով:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-րդ, 121-րդ, 122-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ Վիճակագրական կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով 28.12.2023թ.-ի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2024թ.-ին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր

ճանաչելու, ՀՀ վիճակագրական կոմիտեի թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 2024 թվականի ապրիլի 08-ը՝ դատական իշխանության պաշտոնական կայքի (www.datalex.am) միջոցով:
3. Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
4. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Թումասյան

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.02.23 12:13:39 mID

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am